

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԿՈՎՎԱՆԿԱՎՈՒԹԻՒՆ

Կովկասեան ցուցահանդէսը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ղաչազներ և դաշաղութիւն. Նամակ Բազուկ. Նամակ Երուսաղէմ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ թիւրքաց շայաստանից. Ֆրանսիական ընտրութիւնների նստանքը. Արտաքին լուրեր.—ՀԵՌՈՎԻՆՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍՍՐԱՎԱՆ. Մտացված պարտքը.

ԿՈՎՎԱՍԵԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Վաղը, 15-ին սեպտեմբերի բացվելու է Կովկասեան ցուցահանդէսը: Ցուցահանդէսների նշանակութիւնը արդէն յայտնի է և քրոնոպոլիսում և Ամերիկայում: ցուցահանդէսների նպատակն է մէկ տեղ գումարել և հանդէս դնել այս կամ այն երկրի թէ՛ բնական հարստութիւնները և թէ՛ երկրի ամեն տեսակ արդիւնաբերութիւնները: Եթէ ցուցահանդէսը իր մէջ պարունակում է և զարոցական բաժինը, այն ժամանակ ցուցահանդէսի օգնութեամբ կարելի է ծանօթանալ և երկրի մտաւոր զարգացման աստիճանի հետ: Ցուցահանդէսը միջոց է ապին ոչ թէ միայն այցելու հասարակութեան ծանօթանալ մի երկրի բնական հարստութիւնների, երկրի արդիւնաբերական և մտաւոր կենսի զարգացման աստիճանի հետ, բայց միջոց է ապին թէ՛ տեղացի և թէ՛ օտարազգի արդիւնաբերողներին ծանօթանալ իրար հետ, ծանօթանալ երկրի արդիւնաբերութեան ցածր և բարձր, երկրի արդիւնաբերական ոգու հետ: Եթէ ցուցահանդէսին աջակցի ներկայացնել մեզ երկրի անտեսական վիճակի ճիշտ պատկերը,—ցուցահանդէսը հասած կը լինի իր իսկական նպատակին: Եւ հարցը այս րօպէկի նրա մէջն է՝

արդեօք վաղը բացվող Կովկասեան ցուցահանդէսը երկրի անտեսական կենսի ճշմարիտ ճիշդ և հաւատարիմ պատկեր պիտի ներկայացնէ, թէ՛ ցուցահանդէսում հանդէս գրված առարկաների մեծ մասը պատահական առարկաներն են, մասնաւոր արդիւնաբերութիւններն են, որոնց մէկ տեղ գումարումն անկարող կը լինի տալ մեզ ճիշդ և ամփոփ գաղափար ամբողջ երկրի անտեսական կենսի զարգացման մասին: Արդեօք հողագործական բերքերի, պարտիզանութեան, զինեղործութեան, մետաքսագործութեան, մեղուբուծութեան, կաթնային անտեսութեան, անտառային արդիւնաբերութեան և ձկնորսութեան բաժինները ճշմարիտ կը ներկայացնեն մեզ ամբողջ Կովկասի և Անդրկովկասի անտեսական արդիւն կենսի զարգացման ճիշդ և ամփոփ պատկերը, թէ՛ նոյն կենսից պատահաբար, կտոր կտոր վերցրած մասնաւոր երեւոյթներ, որոնց օգնութեամբ անկարելի կը լինի ճիշդ և ամփոփ գաղափար կազմել մեր երկրի անտեսական կենսի մասին: Արդեօք ժողովրդի տնային արդիւնաբերութեան հանդէս գրված առարկաները կարող են ճշմարիտ գաղափար տալ մեզ մեր երկրի ամբողջ գաւառներէ, շրջաններէ, կամ գոնէ այս կամ այն դիւղերի տնային արդիւնաբերական աշխատանքի մասին, թէ՛ այդ առարկաները ուրիշ բան չեն, թէ՛ ոչ մի բանի անհատական արդիւնաբերութիւններ, որոնց պատրաստելը ընդհանրացած է մի ամբողջ առաւուռում, շրջանում, կամ գիւղում: այլ առանձին անհատների ձեռքի պատահական աշխատանք են... Արդեօք մանկավարժական-դպրոցական բաժինը պիտի ճիշդ գաղափար տալ մեզ Կովկասեան մանկավարժական-դպրոցական կենսի զարգացման մասին, թէ՛ միմյանքի միմյանքի, այն էլ լոկ քաղաքային վարչութեան հաշ-

ուով պահանջ զարգացման զրուծեան մասին, և այլն... Ահա նշանաւոր հարցեր: Եթէ բացվող ցուցահանդէսը երկրի անտեսական, արդիւնաբերական և մտաւոր կենսի թէ՛ լինի, բայց հաւատարիմ արտայայտիչ կը լինի,—ցուցահանդէսը մեծ զին, մեծ նշանակութիւն կունենայ մեզ ամենքիս համար, ում որ հետաքրքիր է երկրի անտեսական վիճակի ուսումնասիրութիւնը, ում որ թանկ է մեր երկրի արդիւնաբերական և մտաւոր զարգացման առաջադիմութիւնը: Ինչպէս կը լինի հանդէս գրված առարկաները մեծ մասամբ պատահական, մասնաւոր, անհատական, կամ աւելի լաւ է ասենք՝ կցկուտը, թէ՛ իրար հետ և թէ՛ երկրի ընդհանուր զարգացման հետ շատ քիչ կապ ունեցող արդիւնաբերութիւններ են,—այն ժամանակ այդ տեսակ ցուցահանդէս ոչինչ զին, ոչինչ նշանակութիւն չէ կարող ունենալ ոչ մեզ, երկրի վիճակի հետ ծանօթանալ ցանկացողների համար, ոչ էլ օտարազգի արդիւնաբերական ներկայացուցիչների համար, որոնց ցանկութիւնն է Կովկասեան ամբողջ հարստութիւնը մէկ տեղ գումարված, մէկ տեղ ամփոփված տեսնել և ուսումնասիրել, որպէս զի իրանք կարողանան օգտվել մեր հարստութիւնից, կապել կապել մեր երկրի հետ, մեզ իրանց կապիտալներ առաջարկել... Այդ բոլոր հարցերը, անուշտ, կը վերաբերեն ցուցահանդէսի բացվելուց յետոյ: Մեր մեր կողմից խոստանում ենք մեր ընթացիկներին անուշտ կերպով զեկուցում տալ Կովկասեան առաջին ցուցահանդէսի մասին և պարզ, անկեղծ և անկողմնապահ կերպով յայտնել մեր կարծիքը արդեօք այդ ցուցահանդէսը հաւատարիմ արտայայտիչ է մեր երկրի կենսի և մեր հաւաքական աշխատանքի զարգացման, թէ՛ զաւուրիչ բան չէ, եթէ ոչ արուեստ-

տական, այդպէս ասած բնական ցոյց, թէ՛ մեզ և թէ՛ օտարազգիների աչքերը շրջանելու համար: Այդ կրիտիկական անուշտ և անկողմնապահ հայեացքը մեզ ծառայելու է որպէս ուղեցոյց ցուցահանդէսի մեր այցելութիւնների ժամանակ: Իսկ եթէ պարտաւորված լինէինք միմյանքի գովել ամեն բան, միմյանքի հիանալ ամեն բանով, կեղծել մեր համոզմունքները, խօսել ընդդէմ մեր խղճի,—այն ժամանակ միայն միտա պիտի բերէինք նոյն ինքն գործին, ամենամիտ ծառայութիւն արած կը լինէինք երկրի անտեսական և բարոյական ապագայ զարգացման գործին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անդրկովկասի մի քանի կողմերում, մասնաւոր այն տեղերում, ուր մասնատակաւ ազգաբնակչութիւնը զօրեղ տարր է կազմում, դաշաղութիւնը սովորական չարիքների շարքն է անցել: Նոյն իսկ այժմ բազմաթիւ են այն առաջակային խմբեր, որոնք պտտվելով այս և այն գաւառներում, թաղանթում, կողոպտում են զիւզացուն, քրում տանում են խաղաղ զիւզացու տաւարը, կոնքերը, ձիւն, շորիկ, և այլուրսով վրդովում են երկրագործ դասակարգի խաղաղ կենցաղավարութիւնը: Այդ առաջակային խմբերը տեղական ժողովրդի մէջ սովորաբար կրում են ԵՂԱՎԱԳ՝ անունը, մի անուն, որը ինքն ըստ ինքեան սարսափ է գցում խաղաղ ազգաբնակչութեան վրա: Ղաչազների կամ ուրիշ խօսքով փախստականներ խմբերը Անդրկովկասում կազմակերպվում են գանազան կերպով և գանազան պատճառներից զերդված: Մէկը թողնում է իր խաղաղ կենսը և

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄՈՒՍՅՎԱՆԻ ՊԱՐՏՔԸ

(ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ)
Ինտելիգենտ մարդը հարկաւոր է երկրին, հարկաւոր է գիւղացուն: Նա հարկաւոր է, որովհետեւ հարկաւոր է լոյսը—խաւարը հեռացնելու համար: Ինտելիգենտ մարդիկ մեծ գործ ունեն կատարելու: Երկիրը նրանց սպասում է և ամենքի համար տեղ կը գտնվի: Ա. Ն. Էնգելզարդտ
1884 թիւն էր: Նոր էի աւարտել Ներսիսեան դպրոցը: Երիտասարդական իղէալներս և ողբերգութեան բուռն զգացումներ տարան, թաքրին ինձ մի նոր տեղ, մի անձանթ աշխարհ, հեռու, շատ հեռու իմ ծննդավայր թիֆլիսից: Այդ նոր աշխարհը հեռուստը Սև ծովի ափերն էին, վայրի Արխանգելսկ, որի դատարկացած անշնն տեղերը բռնել էին թիւրքալայի նոր գաղթած, կրակից ու հայաձանքից փախած թիւրքահայ խմբերը: Ահա այդտեղ, հայ գաղթականների մէջ, վիճակվել էր ինձ ուսուցչի պաշտօն վարել: Արիտաակէս եպիսկոպոս Սեդրակեանի ընտրութեամբ եւ նա գնացի... Այն օրից տարիներ անցան. հարիւրաւոր դրկանքների, բայց և հազարաւոր քաղցր ուրախութիւնների տարիներ... Ուղիղ է, սէրն ու յիշողութիւններն սրտի բաժին են, որին վերապահված է լուիկ մնչիկ կրելու այդ զգացմունքները իր խորքերում, բայց լինում են րօպէկներ, երբ սիրտը յիշողութիւնների զեղումներից արկիտված փղձկում, զուր և ցայտում նրանց: Նոյն է պատահում և ինձ հետ այսօր... Հայ գաղթականների մէջ անցած չորս ամբողջ տարիները ամենաքաղցր և ամենաանարի յիշողութիւններ են թողել սրտիս մէջ, յիշողութիւններ, որ երբէք չեմ մոռանալու: Անց որ այսօր մի քանի տխուր հանդիպանքների պատճառով, ստիպված եմ հրաժեշտ տալ իմ վերստին հայ գաղթականներին. անբաղդովութեան եմ մատնված—էլ չը տեսնի նրանց, էլ նրանց մէջ չը լինել, նրանց զրկվել: Բայց որ աւելի ցաւեցնում է սիրտս—այդ ուսումնաբանն է, որը իմ օրով հիմնվեց խալիֆայական տիրացուական (մազթաբի) աւերակների վրա և չորս տարիներ ծաղկում էր.—նրան վիճակվել է ողբալ իր սե օրը, մենակ և անտիրական է մընացել: Ոչ ոք չը կայ, որ յանձն առէ զնալ այնտեղ, գաղթականների մօտ: Մի գարնանի ինտելիգենտը մի տիրում սրտիս.—չը լինի թէ ուսումնաբանը մնայ առանց ուսուցչի և փակվի... Տխուր վիճակ. միթէ հերիք չէր գաղթականութիւնը, որ ինքն ըստ ինքեան մի գառն հարած էր նրանց համար. հայրենիքից հեռու, գուրկ նրա բոլոր քաղցրութիւններից և անցած օրերի տխուր և գեղցնիկ յիշատակներից, և այլքան ցաւերից յետոյ էլ գրկվել լոյսից,—դա մահից էլ աւելի է. դրան չեն գիմանայ գաղթականները, նրանք կը կորեն... Եթէ գիտենայիք, ընթերցող, թէ ինչպիսի տըխուր վիճակի մէջ են մեր հայ գաղթականները Սև ծովի ափերին, և թէ ինչպիսի տխուր ապագայ է սպասում նրանց,—կարելի է դուք կօդէլէր: Բայց դժբաղդաբար դուք մինչև օրս էլ չը գիտէք, թէ Սև ծովի ափերին մենք բաւական թւով հայեր ունենք, թիւրքալայից գաղթած հազար երկու հարիւր հայ տներ, որոնք թէ՛ մեր Կովկասի ծրուումը չեն, բայց մեր արիւնակից և մեզ աւելի սիրելի են իրանց հայրենական յիշողութիւններով:

Խոստովանում եմ մեծ մեղքը իմ վրա է ընկնում, որ մինչև այսօր առիթ ունենալով աղանատես և մասնակից լինելու այդ հայ գաղթականների տխուր վիճակին, ու նրանց մէջ լինելով,—չեմ աշխատել ծանօթացնելու հայրենի խմբից հեռու մնացած, անտիրական, անձանթ ինքն կըրայիներին: Բայց կարծում եմ շատ էլ մեղաւոր չեմ, որովհետեւ ուղեք եմ լաւ ուսումնասիրել հայ գաղթականների վիճակը, նրանց այժմեան դրութիւնը՝ տնտեսական, մտաւոր, բարոյական և ազգային տեսակետերից, քննել գաղթականութեան պատճառները, որի համար հարկաւոր էր հարցափորձել հարցաւոր կենդանի աղբիւրներից, շըլըլե, այցելել Սև ծովի բոլոր ափերը, մի ծայրից միւրը, մի գիւղից միւրը, և նրանց տխուր վիճակից հաւերն ու կարիքներն արձանագրել: Իսկ դրա համար հարկաւոր էր բաւական ժամանակ: Արդէն նիւթերը պատրաստ են, հարկաւոր է միայն մշակել: Խոստովանում եմ մէկ օր պարտքից դուրս գալ՝ հայ գաղթականների վիճակի մասին ընդարձակ անդեկազր ներկայացնելով: Առ այժմ գաղթականների մասին այսքան տեղեկութիւններ միայն կաւոյ եմ տալ: Հայերը գաղթականութիւնը ղէպի Սև ծովի Կովկասեան ափերը սկսված է վախճանական թիւրքերը, մոտաւորապէս մեղանից 25 տարի առաջ: Գաղթողների մեծ մասը Տրապիզոնի նահանգի Չարչամիւրյի, Օղբուրի, Իւնիայի և թերմէի գաւառակներից են, մնացածները Միտոպի շրջակայներից: Նրանց թիւը համարում է 1200 ընտանիքների և 400 էլ մենակեաց հայ պանդուխտների: Թերես և աւելի, ի նկատի ունենալով որ գաղթականութիւնը մինչև օրս էլ չարունակվում է և զուցէ դուր երկար կը շարունակվի, քանի որ թիւրքերն կը շարունակի իր անխիղճ հայաձանքները: Հէնց ինչպիսիք են տեղեկացայ որ 37 հայ գաղթական

տներ նոր կկեն են Սօչիի բաժնի հայ գաղթականների գիւղերը, իրանց մի երիտասարդ նորընծայ առաջնորդութեամբ թէ ինչքան անմխիթար վիճակի մէջ են հայ գաղթականները, դրա մասին հարկաւոր է երկար գրել, որ խոստանում եմ մի ուրիշ անգամ կատարել. առ այժմ միայն շատանում եմ մի քանի անխաղաղ զգեստը նրանց տխուր կենսի և վիճակի վրա: Սուխում քաղաքից սկսած մինչև Անապա, Մայկոպ, Եկատերինոպոլ, համարեա թէ Սև ծովի Կովկասեան ափերի մի ծայրից միւս ծայրը, մօտ 500 վերստից աւելի տարածութեան վրա, հարիւրաւոր հայ տները հազիւ միայն կարողացել են հինգ գաղթական խմբեր կազմել, որոնք իրարից բաւական հեռու են և փոխազարծ հարցորակցութիւնը իրար մէջ համարեա թէ միմյանքի ծովով է լինում: Կրանք են Սուխումի շրջանի, Սօչիի, Վիլչեսկիովսկեան, Մայկոպի բաժնի խմբերը: Այդ խմբերից խրաքանչիւրը ունի մի քանի հարիւր տուն գաղթականներ, բացի վերջին խմբից, որոնք սակայն ոչ մի տեղ կենսարեանական համայնքում մեծ զիւղեր չեն կազմում, այլ մի քանի տնով խմբեր և փոքրիկ գիւղեր: Այս կողմից շատ ցաւալի կ տեսնել մասնաւոր զինքն բաժնի, Անապայի շրջակայքը, ուր մի հատիկ գիւղ, նոյն իսկ մօտիկ տներն մի խումբ չէք գտնի: Անցնում էք անապայի տարածութիւնը հազիւ մի մի հաս տներ էք տեսնում. կարծես անապատում լինէք, օաղիւններ էք տեսնում: Այդ կողմից գտնել մի քիչ աւելի մխիթարում է Սուխումի շրջանի հայ գաղթականութիւնը, ուր թէ աւելի թւով են և թէ աւելի խիտ բնակչութիւն ունեն, կազմելով համեմատաբար աւելի մեծ խմբեր և գիւղեր, պսակելով մօտիկ թէ հայրենիքին (Անատոլիա) և թէ Կովկասի կենսարեան և ունենալով մի մեծ կենսարեանական գիւղ, որ իր

տներ նոր կկեն են Սօչիի բաժնի հայ գաղթականների գիւղերը, իրանց մի երիտասարդ նորընծայ առաջնորդութեամբ թէ ինչքան անմխիթար վիճակի մէջ են հայ գաղթականները, դրա մասին հարկաւոր է երկար գրել, որ խոստանում եմ մի ուրիշ անգամ կատարել. առ այժմ միայն շատանում եմ մի քանի անխաղաղ զգեստը նրանց տխուր կենսի և վիճակի վրա: Սուխում քաղաքից սկսած մինչև Անապա, Մայկոպ, Եկատերինոպոլ, համարեա թէ Սև ծովի Կովկասեան ափերի մի ծայրից միւս ծայրը, մօտ 500 վերստից աւելի տարածութեան վրա, հարիւրաւոր հայ տները հազիւ միայն կարողացել են հինգ գաղթական խմբեր կազմել, որոնք իրարից բաւական հեռու են և փոխազարծ հարցորակցութիւնը իրար մէջ համարեա թէ միմյանքի ծովով է լինում: Կրանք են Սուխումի շրջանի, Սօչիի, Վիլչեսկիովսկեան, Մայկոպի բաժնի խմբերը: Այդ խմբերից խրաքանչիւրը ունի մի քանի հարիւր տուն գաղթականներ, բացի վերջին խմբից, որոնք սակայն ոչ մի տեղ կենսարեանական համայնքում մեծ զիւղեր չեն կազմում, այլ մի քանի տնով խմբեր և փոքրիկ գիւղեր: Այս կողմից շատ ցաւալի կ տեսնել մասնաւոր զինքն բաժնի, Անապայի շրջակայքը, ուր մի հատիկ գիւղ, նոյն իսկ մօտիկ տներն մի խումբ չէք գտնի: Անցնում էք անապայի տարածութիւնը հազիւ մի մի հաս տներ էք տեսնում. կարծես անապատում լինէք, օաղիւններ էք տեսնում: Այդ կողմից գտնել մի քիչ աւելի մխիթարում է Սուխումի շրջանի հայ գաղթականութիւնը, ուր թէ աւելի թւով են և թէ աւելի խիտ բնակչութիւն ունեն, կազմելով համեմատաբար աւելի մեծ խմբեր և գիւղեր, պսակելով մօտիկ թէ հայրենիքին (Անատոլիա) և թէ Կովկասի կենսարեան և ունենալով մի մեծ կենսարեանական գիւղ, որ իր

ՆԱՄԱԿ ԵՈՒՇՈՒՑ

Սեպտեմբերի 7-ին

հրացանը ձեռքին առաջակցութեան է դիմում, փակուցում է զիւղերից և ապաստանում անմատչելի լեռները և կիրճերը՝ արդարադատութեան ձեռքից ազատ մնալու համար. մի ուրիշը փակուցում է բանտից, նոյնպէս զաշաղ է դառնում. երրորդը ի նկատի ունենալով մուտք անկիւններում գտնուող առաջակցութեան և զաշաղների անհոգ կեանքը և գրավելով այդ կեանքից, թողնում է խաղաղ աշխատանքը, և նոյնպէս զաշաղ է դառնում: Պատահում է նոյնպէս, որ սիրած աղջկան փակցնելու մտքով ողբերկած, կամ ընտանեկան-ցեղական վրեժխնդրութեամբ լցված երիտասարդը նոյնպէս դիմում է զաշաղութեան, — և այդպիսով շատ մեծ թիւ են կազմում այն աւերիչ խմբերը, որոնք իրանց նուիրել են առաջակցութեան, և յայտնի են ամեն կողմերում (Հրաշաղներ) անուրնով:

Պէտք է նկատել, որ այդ առաջակցային խմբերը, որոնք և ոչ թէ միայն թուլանում են, այլ որոնց համար շատ սովորական բան է սպանելը, ցորենի կամ խոտի դէղեր կրակ տալը, և նոյն խիւստիքով գիւղերի վրա յարձակում գործելը, զԵԼ խառնարկէս և շատ քիչ բացառութեամբ թուրքեր են, որիչ ազդեցութեան պատկանողներ շատ քիչ են պատահում զաշաղների մէջ: Ձերբակալել այդ զաշաղներին և վերջ տալ նրանց առաջակցային գործունէութեանը, պէտք է ասել, շատ էլ հնչադարձ է, որովհետև այդ խումբերը սովորաբար դարձում են իրանց հայրենի գաւառներում, այսինքն այնպիսի տեղերում, ուր ամեն մի կիրճ, և ամեն մի քար նրանց շատ լաւ ծանօթ է: Բացի դրանից զաշաղների ազդակցները և նոյն խիւստիքով շատ բէ դեր, իրանց շահերի համար,—պաշտպանում, հովանաւորում և շատ անդամ թաղանթում են այդ զաշաղներին, որպէս զի նրանք չը բռնվին և իշխանութեան ձեռքը չընկնեն: Ղաշաղների աջող գործունէութեան նըպատակով հանդամանքներից մէկն էլ այն է, որ դրանցից նրանք, որոնք գործում են Անդրկովկասի այն տեղերում, որոնք սահմանակից են Պարսկաստանին կամ Ռուսիային, վտանգի դէպքում անմիջապէս անցնում են սահմանը և ապաստան գտնում հարեան մահմեդական երկիրներում:

Այդ հանդամանքների մէջ հատկանալի է, թէ որքան յանդամանք կարող է հասնել ամեն մի զաշաղի կամ առհասարակ զաշաղների խմբերի գործունէութեանը. նրանցից հանդիստ չունեն խաղաղ գիւղացիները, խաղաղ ազգաբնակչութիւնը: Եւ հէնց այս րոպէիս զիւղերում աւերումներ գործողները, եզներ, ձիեր և ուրիշ տաւար քաղու առանողները, և վերջապէս բազմաթիւ սպասարարները:

նուիրենք գործողները՝ այդ զաշաղների խմբերն են, որոնք մեծ երկիւղ են ազդում իրանց բարբարոս արարքների: Մեր դատաստանական ժամանակագրութիւնը լի է այդ զաշաղների սխալագործութիւնների պատմութիւններով, և զաշաղութիւնը ընդհանրապէս կազմում է տեղական ազգաբնակչութեան և ան կրանքի չարիքներից մէկը:

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅՑ

Սեպտեմբերի 10-ին

Կովկասեան ցուցահանդէսի հարցը վճարելու օրէնք «Մշակի» մէջ զրկեցան բազմաթիւ յոգեւածներ, որոնց նպատակն էր զլրատարապէս մի կողմից ազգաբնակչութեան ուշադրութիւնը դարձնել կազմակերպչական գործունէութեան ուշադրութեան ուշադրութեան վարչութեան ուշադրութեանը, որպէս զի միջոց տայ ազգաբնակչութեան ծանօթանալու և ըմբռնելու այդ ցուցահանդէսի նշանակութիւնը: Սակայն մինչև այժմ այդ բոլորը մի դրական հետևանք չէ ունեցել: Ժողովուրդը ցուցահանդէսի նշանակութիւնը չէ հասկացել... Բացի դրանից, չը նայելով որ «Կովկասեան» ընկերութիւնը մի քանի տարի է որ աշխատում էր՝ կովկասեան ցուցահանդէսի մասին, սակայն միայն վերջերս, այն է, կարծես, միայն նոյեմբերին, թողաւորութիւն ստացաւ ցուցահանդէսի իրադրութեանը: Իսկ այդքան կարճ ժամանակամիջոցը, մեր կարծիքով, շատ քիչ է կովկասի պէս մի երկիր ազգաբնակչութեան հասկացնել և ըմբռնել տալու ցուցահանդէսի նշանակութիւնը... Հաւանականաբար գոնէ երկու տարի ժամանակ էր հարկաւոր, որպէս զի այդ ժամանակի ընթացքում աւելի և աւելի արձարձիկը այդ ինչոյից և ժողովուրդին էլ միջոց ունենար պատրաստել ցուցահանդէսին:

Կովկասը իր արհեստագիտական ճիւղում մասնաւոր շատ յետ է մնացել, ուրեմն շատ ցանկալի էր, քանի որ կանոնաւոր արդիւնաբերութիւնը սկսեալ կապերով կապված է աշխատանքի գործիքների հետ և վերջիններիս բարեւաւ դրութիւնիցն է կախված բերքի աղւնութիւնը, շատ ցանկալի էր ատում ենք, որ մասնաւոր այդ ճիւղը խրախուսվէ... Սակայն՝ նախ մեր արհեստագործները չը գիտեն էլ թէ ցուցահանդէս պէտք է լինի, երկրորդ՝ այն իմացողները, որոնք կը ցանկանային իրանց մի որ և է գործիքով մասնակցել ցուցահանդէսին, իրանց գրեթէ չըտար դրութեամբ դժուար թէ այդ կարճ ժամանակաւ միջոցում ուշ գործեն իրա վրա, քանի որ հայի

խնդիրը ստիպում է դրանց առաւօտից մինչև ուշ երեկոյ տքնել աշխատանքի ծանրութեան տակ: Բացի դրանից անպատակ էլ է միայն հնազանդութեան գործիքներով մասնակցել ցուցահանդէսին, այլ հարկաւոր է փոփոխութիւն մտցնել, բարելաւել և նոր գործիքներ հնարել ու նրանցով մասնակցել, որոնց համար մտածել է հարկաւոր, չինել, փորձել և ուղղել է հարկաւոր. իսկ մասնակցելու, չինելու, փորձելու և ուղղելու համար՝ ժամանակ ու միջոց է հարկաւոր: Սակայն, ինչպէս ասեցինք, մեր արհեստագործները զբաղված են հացի խնդրով: Սրա վրա աւելցնենք, որ մեր արհեստագործները առանց մի որ և է գործիք և կարևոր դրաման չեն մտածում և հակվում դէպի կատարելագործութիւնը: Իսկ ներկայ պայմաններում, տասն ամսվայ կարճ ժամանակամիջոցում, ցնցել նրանց մտածութիւնը, զրդել նրանց շինելու մի որ և է գործիք և մի և նոյն ժամանակ միջոց չը տալ նրանց իրանց օրական պարէնը հայթայթել, առեւտուրը դժուար է... Ներկայ դժուար հանդամանքներում, քանի որ մեր արհեստագործները կարգը և առհասարակ կովկասեան ազգաբնակչութիւնը՝ իր ձախող պայմաններով չըբացատրված, անհարող է նշանաւոր տոկոսով մասնակցել ցուցահանդէսին, շատ ցանկալի էր հնչում և ձեռնուռ միջոց որոնել, զբաւելու ազգաբնակչութեան սէրն ու եռանդը դէպի ցուցահանդէսը: Եւ քանի որ արդէն վրա են հասել ցուցահանդէսի բացվելու օրերը և գուցէ անկարելի է այլ ևս դանդաղ օր ժամակալել միջոցների զիմն, ապա այդ դէպքում շատ ցանկալի է ժամանակը երկարացնել մի տարով եւ, որով մեր կարծիքով, մեծ բարեք հասցրած կը լինին կովկասի ազգաբնակչութեան ու նրա անտեսական աննախաձեռնելի դրութեանը:

Անցեալները «Մշակին» հարցրել էինք, թէ Բագուի մէջ արհեստագործների շրջանում, ձեռնարկել են շինել այլ և այլ դիւղաանտեսական գործիքներ, կովկասեան ցուցահանդէսն ուղարկելու մտքով: Գրանցել երկուսը մեզ յայտնի են՝ միւր կայսերու, միւրը կաթիլը ջրային մասերը բաժանելու մեքենան է: Այժմ ցաւելով պէտք է ասել, ժամանակը կարճ լինելով և մեր արհեստագործները անապահով դրութեան և մէջ լինելու պատճառով՝ չը կարողանան հասցնել իրանց մեքենաները ցուցահանդէսի բացմանը: Կաթիլ մեքենան շինողը թողել է մեքենան անկատար, և ձեռնարկել է նախագործարանի մոզելը մտաւից շինելուն, որը ի հարկէ, համեմատաբար աննպատակ կարող է համարվել:

աների թշուով միակն է հայ գաղթականների մէջ: Իսկ իր մէջ գտնված մի սուրբ յիշատակով յոյս ու պահպան է ամբողջ Սև ծովի ափերին ցերեզան կորած, անտիրական հայերին: Այդ գիւղը, Մծարան է. թէ և անունը օտար հնչիւն (արևադեղին է), բայց մօտիկ իմ սրտին և պաշտելի ինձ համար իր հազարաւոր քաղցր յիշողութիւններով: Այդտեղ են անցել իմ յոյս տարիները, զրկանքի և երջանկութեան տարիներ,—ուր մաշել եմ կեանքս և սիրտ ու հոգի եմ տւել իմ ջերմ սիրտով հայ գաղթականներին: Այդ օտարտալ անունը շատ քաղցր յիշողութիւններ է թողել սրտիս մէջ: Ըւանդ, ես էլ չեմ տեսնի նրանց, մի քանի տխուր հանգամանքներ ինձ հեռացնում են նրանցից, բայց ոչինչ... Մի բան միայն տանջում է ինձ.—իմ ուսումնարանը մնում է անտէր, զրկվում է ինձանից: Բայց միթէ ոչով չը կայ որ իմ տեղը բռնի, յանձն առնի զնալ նրանց օտո, նրանց ինձպէս նուիրվի, ինձպէս սիրի իմ ուսումնարանը անտէր մնայ, Մծարան առանց ուսուցչի մնայ,—այդ կարելի չէ. էլ ո՞վ պիտի նայի գաղթականներին. նըբանք կը կորեն. այդ լաւ գիտեմ: Ախ, եթէ տեսնէիք թէ ինչքան զեղեցիկ է Մծարան իր գաղթական ընտանիքների կեանքի տխուր և ուրախ յիշատակներով, հաւատացած եմ, որ դուք էլ հայ վարժապետներ, նրանց կը սիրէիք, կարելի է որ ինձանից էլ աւելի լծէ ճշմարտութիւն էք տարածում, եթէ արհեստներն էք սիրում, կը դնաք Մծարան, վարժապետութիւն կանէք ուսումնարանում: Եւ ո՞վ չի սիրի Մծարան. Անտառապատ լեռների վեշերի վրա, աչքը դարձրու ամեն կողմը, տես բոլորը անտառ է. առջը ծիւղում է արծաթափայլ ծովը արևի օսկեգոյն ճառագայթներով տակի թէ և զիւղ է Մծարան, փոստային կայարան չունի, բայց թղթակցութիւնները կարելի է միշտ ստանալ Սուխուმიց, որ նրանից մօտ 35 վերստ

հեռու է և Գուգարու գիւղաքաղաքից, որ նախահանդիստ է, 18 վերստ Մծարայից հեռու. իսկ Մծարայի հեռաւորութիւնը ծովից մօտ 10 վերստ հարկաւ կը լինի, բայց զեղեցիկ երևում է ծովը, որովհետև զիւղի դիրքը բարձր է ծովից, մօտ 1/3 վերստից աւելի:

Բայց ծովից աւելի զեղեցիկ է՝ հայ գաղթականի սիրտը. մի ազնիւ ժողովուրդ են այդ հայ գաղթականները, որոնց նման գուցէ ոչ մի տեղ չէք գտնի: Գոնէ ես չեմ տեսնի, թէ և խոստովանում եմ որ առաջին անգամն էլ հայ գիւղ տեսնում եմ Գրանտով չեմ ուզում տեսլ թէ գաղթականները հրեշտակներ են, պակասութիւն չունեն. ոչ ընդհակառակը՝ կիրքը, վայրենի կիրքը ոչ մի տեղ այնքան կատարի աստիճանին հասած չեմ տեսնի, ինչքան այնտեղ. կուսակցութիւններ, վրեժխնդրութիւն, հայկական վրեժխնդրութիւնը մասնաւոր՝ այնտեղ էլ ծանօթ են, այնտեղ էլ կան, ինչպէս և ամեն տեղ, բայց դրանց հետ կան այնպիսի լաւ յատկութիւններ, որոնք մուռացնել են տարին վատութիւնները և ձեռ սիրել տալիս նրանց: Մէկ-մէկ կուսեմ, եթէ չը ձանձրանաք: Լաւ լսեցէք. անտառից մի խուլ ձայն է գալիս, որ նմանվում է կացնի հարուածին. երկար հարուածներից յետոյ լսվում է մի սաստիկ թնդիւն ճարձատելով, որ շարժում, իրար է անցնում գետից: Մտնելը, կիմանաք. հաստարմատ վրեժխնդրի կազմին, կամ բարձր ածարին ընկած են ընդի բաժանված: Հայ գաղթականն է այդ հսկան, որ մտքում է ծառերը, արտեր է շինում, որովհետև ամբողջ Արեւիկան ծառերի, անտառի աշխարհ է, ուր ծառերից դատ մի կտոր հող չէք գտնի: Հէնց այն գիւղի մասին, որ այժմ այնքան զեղեցիկ է, պատում էին ինձ, որ իրանց եկած օրը այնքան վատ է եղել, ծառերի ու փշերի մէջ կորած, որ ոչինչ չէր կարելի տեսնել և փոքրիկ շաւիղ չէր կարելի գտնել: Բայց

այսօր մի փուշ չէք գտնի այնտեղ. արտերում մի մի հատ մնացել են ընկուղի և ուրիշ հարկաւոր ծառեր, իսկ աների մօտ ամբողջապէս հայտնիների ձեռքով մշակված բանջարտանոցներ են, որ ամեն առն պիտի ունենայ անպատճառ վերջին տարիները սկսել են և պտղատու ծառեր զարգացնել: Աշխատասիրութեան և բանելու մէջ ոչ ոք չէ կարող նրանցից անցնել. սարսափելի աշխատասէր, քրպիսի են երբէք չեմ տեսնի: Բոլոր աշխատանքները մէջ կինը անբաժան ընկեր է: Տեսնել էք մի հայ կին, որ օրորոցը շալակած, մէջը երեխային ջնացրած, ձեռքը ամաններ կամ գործիքը բռնած, մէկ-մէկալ շտապող դէպի արտը, այն էլ անտառային անհարթ շալակով իր անցնի բուռի հետ: Դա ամաններով կերակուր է տանում իր մարդու համար. այդ կերակուրը ինքն է պատրաստել, ինքն է ցանկ (պատվայ ու տելիք), ինքն է մշակել, էլ ինքն է տանում, և դարձեալ ինքն է պահում տունը, ընտանիքը, մէկ-մէկալ «ածուրը» (բանջարանոց) մշակում, փէ տա տով փորում, ցանում, փնջում, քաղում, չորացնում... Ո՞ր մէկն ասեմ, հայ գաղթականի կինը մի ազատ էակ է. այնտեղ միայն ևս տեսայ կնոջը՝ բոլորովին աղտոտ մարդկանց բարբարոսութիւնից, բուրբուրին հաւասար իրաւունքներով, ինչպէս մարդը, թէ և տանկատանցի, արեւելցի, բայց ազատ է ամենքի հետ խօսելու, թէ փոքրիկ և մեծի, թէ հայի և օտարի. նրա լեզուն կազմված չէ: Մի խօսքով կինը ազատ է և անհակա, ընտանեկան կեանքը սուրբ է և մաքուր: Իսկ թէ մի-մէկ պատմեմ նրանց ընթացքները: Թիւրք է, հարցասիրութիւնը, հետաքրքրութիւնը դէպի ամեն բան, ինչ որ նոր է և ճշմարիտ, ինչ որ վերաբերում է մեր հայրենիքին ու հայրենի մանաւանդ իրանց Անտառային, հայրենի վրձակին ամեն երկիրներում, նրանց կարեկցութիւնն ու օգնութիւնը դէպի նեղվածներն ու չըբարեկերպ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Արտասահմանի հայ լրագիրներում կարգում ենք. «Կ. Պոլսի հայոց կրօնական ժողովը մի մասնախումբ կազմած է 3 եկեղեցականներէ, նրանց հիւրասիրութիւնը.—կը զարմանաք, չէք հաւատայ: Գեռ չեմ մտաւցել և երբէք էլ չեմ մտաւայ այն սիրալոյս ընդունելութիւնը, որ դոյս Սուխուმიց շատ հեռու. Չ երևա մօրի չըջանի զիրեցան հայ գաղթականների մէջ անցեալ ամառ, իմ այցելութիւնների ժամանակ: Կիրքը, լրագիրը, զորոցը—դրանք այնպիսի կապանքներ էին, որ կազմում, կաշխատում էին ինձ ժողովրդի սրտի, մտքի և հոգու հետ: Հերթ է որ ձեռքը մի դիրք կամ լրագիր տեսան. ընդ չըջապատում են ամեն կողմից, և դու մնում ես գերի, գերի նրանց աշխոյժ հարցասիրութեան, և ինչքան քաղցր ու սուրբ էին մեր զրոյցները... Երջանիկ գերութիւն, երջանիկ վրձակ, ոչ մի ազատութիւն չի հասնի այդ գերութեան... Հրաշալիքների աշխարհից եմ պատմում, բայց հրաշք չը կարծէք իմ ասածները. բոլորը իրողութիւններ են:

Ինչպէս Մծարան, այնպէս և բոլոր գաղթական գիւղերը անձուէր, երիտասարդ—վարժապետներ են սպասում, որպէս զի ազգութեան մէջ չը խրվեն և չը կորչեն: Իմ կողմից մի պայման էլ ես եմ առաջարկում. ուսուցիչը պիտի լինի ազնիւ, սրտով և հոգով անձնաւորութիւն և լաւ հայրենի իմացող: Ո՞վ չէ հաւատում իրան, ով նուիրված չէ այդ գաղափարին, թող չը շարժվի, այդպիսին ախտօ է ընծայել զեղեցիկ Մծարան. ինձ մնում է յանձնել «Մշակին» սրտիս հաւաքանքները, որ նա իր ազատ թեքով տանի հոչակէ նրանց աշխարհի ամեն ծայրերը և գուցէ ու համակարգը շարժէ դէպի մեղեցիկ հեռու. ընկած, ւաչքից հեռացած, մտքից մոռացած», Սև ծովի ափերի մեր հայ գաղթականները:

Բ. Մուրադեան

պաշտօն տարով անոր, որ աչքէ անցունէ բոլոր այն գրութիւններ, որոնք էջմիածնի կաթողիկոսներէն զրկուած են, կը պատրիարքարանէն իրենց դիմում եղած է եկեղեցական օրէնքներէ վերաբերող ծանր խնդիրներ լուծման համար:

«Արևելք» լրագիրը հաղորդում է հետևեալը: «Պ. Նորայր Բիւզանդացի, որ էջմիածնայ Գեորգեան ճեմարանին համար հայերէնի և ֆրանսերէնի ուսուցչութեան հրահրուած էր ճեմարանին տեսչութեան կողմանէ, իւր անձնական տկարութիւնն առաջ ընդհատելով, չէ ընդունել այդ առաջարկը: Պ. Նորայր Բիւզանդացի միշտ 'կը գտնուի ի Ստոքհոլմ, ուր կը պարագայ նախնայ մատենագրութեան ուղղութեամբ և հայերէնէ ի ֆրանսերէն բառարանի մը պատրաստութեամբ»:

Կ. Պոստոյ մեզ գրում են հետևեալը: Սուլթանը իր գահակալութեան տարեգրածին առիթով իբր նշան պատրիարքի ուղերձէն գոհ լինելուն, չնորձըրաւ վաւերացունել միայն Ազգային Ներսիսեան հակա ժողովին ընտրուած Քաղաքական Ժողովը, որի ընտրութիւնն 4 ամէս ի վեր չէր վաւերացած Բ. Գուռը, որպէս զի արդէն զիջուած և խառնաշփոթ դրութեան մէջ գտնուող ազգային գործերն կարգադրվելին»:

«Արևելք» լրագիր մէջ կարդում ենք. «Պ. Ներսէս Ծաղկաւան, որ Ռուսիոյ կայսերական թատրոններու վարչութեան կողմէ խառն գնացած է կատարելագործելու իւր ձայնն և մշակելու թատրոնական արուեստն, այժմ կը գտնուի ի Նապոլի, ուր յուլիս 20-էն ի վեր սկսած է դասեր աւանդել իտալական հուշակար երգահաններով: Պ. Ներսէսը հրահրուած է մտնել Գրեմուտ պ. Ծաղկաւանի ձայնի մասին ըրած է թէ նրա ձայնը մեծ գերազանցութիւն ունի իտալական առաջնակարգ երկու տներներու: Գամանի և կայսրի ձայնէն, և ի նկատ առնելով նորա աշխատասիրութիւնն և մեծ ընդունակութիւնը, խոստացած է մէկ տարիէն յետոյ ի բեմ հանել զնա նախ Նապոլիի Սան-Քարլո արքայական թատրոնին մէջ, ապա Միլանի Սիլվայի թատերաբեմին վրայ, որու հուշակար ղեկավարը պ. Ռիկորդի սերտ յարաբերութիւն ունի Պոստոյի հետ և առաջինայ աշխատ ևս Սիլվայի մէջ ներկայացնել պիտի տայ վերջնայ մէկ նոր օպերան: Գրեմուտի բան չէ երբեք Միլանի և Նապոլիի սոյն երկու մեծ թատրոններու մէջ: Մեծ երգիչ մը եթէ չէ ելած այդ թատրոններու բեմերուն վրայ, չի կրնար համաշխարհային հուշակար ստանալ, և կը մտղմեմը որ պ. Ծաղկաւան կատարել վաղուցուցանուած անցնի սոյն երկու թատերաբեմերէն: Պ. Ծաղկաւան յառաջիկայ ձմեռ երբեմն երբեմն միայն պիտի երևի նուազահասնողներու մէջ, Պոստոյի հրահրուած մասնաւոր առաջնորդութեամբ»:

ԹԵԼԱՒԻՑ մեզ գրում են. «Այստեղի բանկի երիտասարդ նախագահ պ. Յովհաննէս Բաղդոսյանց, հետևելով իր հանրայնացի հօր օրինակին, շարունակում է պահել այստեղի օրիորդական Գայեանեան ծխական ուսումնարանում 10 քառոր աշակերտները Այդ բանում աջակցում են նրան և բանկի միւս անդամները, բայց մի մասնաւոր գումարով: Զանկալի է, որ այդ պարտնի օրինակին հետևողներ գտնվելին Թէլաւի հարուստ հայերի մէջ: Գուցէ դրանով կարելի լինէր շատացնել ուսում առնող երիտանների թիւը, քանի որ հայոց զարգացման թէ աշակերտութիւնը ի և թէ մասնաւոր աշակերտների թիւը շատ չնչին է, համեմատելով այստեղի հայ ազգայնականութեան հետ»:

Մեզ ուղարկված է սպագրիւտ հետևեալ նկատողութիւնը. «Թիֆլիսի Գայեանեան օրիորդական ուսումնարանը քանի գնում է, այդքան էլ ընկնում է և աշակերտութիւնների թիւն էլ զգալի կերպով պակասում: Այսօր իւրաքանչիւր դասարանում նստած են ոչ անելի 15—20 աշակերտութիւն և չը նայելով այդ բանին Գայեանեան ուսումնարանի վարչութիւնը շարունակում է զուգընթացներ պահել և չէ ուզում նրանց փակել, կամ միացնել, մասնաւոր այդ այդպիսով հիմնական դասարաններում աշակերտութիւնների թիւը 30—35 հոգուց չէր էլ անցնի: Եւ վարչութեան այդ վարմունքը նպատակը ոչ այլ ինչ է, եթէ ոչ որ մի երկու ուսուցիչներ և վարժուհիներ այնտեղ պաշտօն ունենան, և ուսուցիչ ստա-

նան: Հասարակական գումարների հետ այսպէս անխնայ և անտարբեր վարելն ու անպատասխանութիւնը՝ աւելի քան դատարարութիւն է: Աշակերտութիւնը չունենալ, բայց դասարաններ պահել, և այդ էլ միայն այս և այն վարժուհուն կամ վարժապետին տեղ տալու համար, — կարող են անել միայն նրանք, որոնք զարգել վրա նայում են իրենց մի այսպիսի հիմնարկութեան վրա, որը հաստատված է սրան կամ նրան հաց տալու համար»:

«Գէմոն» օպերան, որը սեպտեմբերի 12-ին ներկայացվեց օպերային թատրոնում, աւելի լաւ անցաւ, քան թէ ինքն հասարակութիւնը սպասում էր, Առհասարակ այս տարվայ օպերային խումբը առ այժմ այնքան վատ է կազմված, որ թերը այնքան թույլ են, որ հասարակութիւնը շատ քիչ է յաճախում թատրոնը, և յաճախողներին շատ քիչ է գնում են, կարծէք նախորդ համոզված լինելով, որ ոչ մի զուարճութիւն այնտեղից դուրս չեն բերի: Սակայն «Գէմոն» համեմատաբար աւելի լաւ անցաւ: «Գէմոն» դերում պ. Կոլոստայեցիի լաւ արարածութիւնը թողնելով, նա ունի բարձր և ազդու ձայն, և եթէ նրա ձայնի միջին նոտաները մի փոքր աւելի դուրեկան լինէին, նա կարող էր շատ լաւ Գէմոն լինել: Թամարի դերում այդ օրը դուրս եկաւ տիկին Զարուզայան, որի ձայնը և խորը բարձր կարելի է համարել լալ կել է ըստ զուգարար կարելի է համարել զուր զաւր չէ զբաւում հասարակութեան սիրտը, այդ զխառնարակն այն պատճառով, որ նրա կազմուածքը սաղ չէ զալիս ձկուն և նազուկ վերահու գեղեցիկ թամարայի մասին կազմած հակացողութեան... Միւս խաղացողները նպատակներն ամբողջութեամբ, բացի պ. Տոմարս, որ կատարում էր երիտասարդ կնիակը դերը: Օրկէստրը, ինչպէս և միշտ, աչոյ չէր այդ երեկոյեան, — իսկ թատրոնը կիսով չափ գատարել էր»:

Ինչպէս հաղորդել էինք, պ. Ֆորկատի օպերային խումբը կը սկսի իր ներկայացումները վաղը սեպտեմբերի 15-ին: Կը ներկայացվի Օֆֆենբախի «Կապուտ միւրու» օպերան, ա. Տրոցիայի և պ. Լօրիի մասնակցութեամբ:

Մեզ խնդրում են հաղորդել, որ երեքշաբթի, սեպտեմբերի 19-ին, վրաց դերասանական խումբը կալուածական բանկի թատրոնի դահլիճում կը տօնի վրաց մշակական խմբի տասնամեայ գործուհին և յոբելէան յօբելէանը: Ներկայացումը կը սկսվի հանդիսաւոր նախագով. կը խաղացվի Լիւիստովի «Բաժանում» կոմիկայի առաջին գործողութիւն, Գրիբոլեզովի «Կեղծից պատահաս» կոմիկայի առաջին գործողութիւն, Զաքարեկի «Եսանում» կոմիկայի երկրորդ գործողութիւն և Ստեփաննայի «Երկարապա» կոմիկայի երկրորդ գործողութիւն: Ներկայացումը կը վերջանայ ապօթ է օգով: Կը մասնակցեն խմբի բոլոր անդամները:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Ապրիլ ամսին տեղի ունեցած հողաբարձական ընտրութիւնը նոր կանոնադրութեան դրութեամբ անվաւեր եղաւ: Ուստի պիտի լինէր հողաբարձական ընտրութիւնը Նոր ընտրութիւնէ հողաբարձական պիտի ընտրվին ս. Յովհաննէս եկեղեցու երկուսը զարգացման համար: Անցեալ օգոստոսի 27-ին պատարագից յետոյ տեղի ունեցաւ 13 պատգամաւորների ընտրութիւնը: Այդ օրը եկեղեցին լի էր խուռն բազմութեամբ: Փոխանորդ Աղուանեան եպիսկոպոսը մի քարոզով ի միջի այլոց բացատրեց ժողովրդի իրաւունքները, և պարտականութիւնը ընտրութեան ժամանակ Հետեւեալ կերպով, սեպտեմբերի 3-ին, այդ պատգամաւորները հաւաքվելով ընտրեցին երկու հողաբարձու և երկու անձնավորութեամբ: Ընտրութիւնը գաղտնի ընկալուածութեամբ պիտի լինէր: Բայց նախ քան թէ Երկուսի թեան, պատգամաւորներից մէկը առաջարկեց, որ պատգամաւորները նախ խորհրդակցեն միմեանց հետ թէ ո՞ւր պիտի ընտրեն: Այդ տարօրինակ առաջարկութիւնը նախագահ արքայանի և պատգամաւորների կողմից հաւանութիւն զտաւ: Պատգամաւորները եկեղեցուց դուրս եկան, որ խորհրդակցեն ու յետոյ՝ կրկին եկեղեցի մտնելով, առջարկութեամբ գաղտնի քուէարկութեամբ հողաբարձուներ ընտրեցին... Հողաբարձու ընտրվեցան պ. պ. Յակոբ Լիսիկանց և Յովհաննէս Մէլքոնցըրեան, կանդիդատ՝ Մալխասեան և Մըկրտումեան: Երրորդ հողաբարձուն ըստ նոր կա-

նոնադրութեան պիտի լինի ս. Յովհաննէս եկեղեցու երեցիները, իսկ չորրորդ հողաբարձու-ժխական քահանան, որ դուռ չէ նշանակված: Ամսիս 3-ին տեղի ունեցաւ նաև տեղի ս. Լուսավորիչ եկեղեցու երկուսը զարգացման հանդիսաւոր բազմութիւն: Այդ նոր զարգացման առաջիկ միջոցաւ պիտի լինեն Հողաբարձու այդ զարգացման ընտրվեց պ. Յովհաննէսեան. մնացած երկուսը պիտի լինեն եկեղեցու երեցիները և քահանան»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵԼԵԿՈՒԹԻՒՆԵՐ ԹԻԻՐՔԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Հաղորդի հայ ժողովրդի կողմից նորբեր հետեւեալ աղերսաղերն է ուղարկված Կ. Պոլսի հայոց պատրիարքարան:

«Ամենազատիւ Սրբազան Պատրիարք Հայր, Նախագահ Կենարանական Պատկառելի Վարչութեան.

«Սրբազան Հայր, որքան տարիներ է ի վեր վարատական ոչխարի պէս կը մնան Տիգրանահերտի թիւերը գտնուող գաւառաբնակ Հայերն, յորս և մենք կը գտնուինք Հայրոյ աւանի մէջ է ձեռս արեւնարբու Գրգուց. մասնաւոր մեր Սեփիւն-պէյ, յիշեալ կատարի զազանը, անպատմելի և աննկրելի հարստահարութիւններ և ծանր լուծներ մեր վրայ դնելով մինչ այս կէտ, ալ հիմա չը դիմանալով այսչափ անտանելի և տաժանելի վիճակաց:

«Սա կը պատմենք յիշեալ Սեփիւն-պէյի և իր աւագակ սպասուորաց ձեռամբ մեր անհուն տառապանքներ, մարդ սպանելի, տուն աւարի առնել, եկեղեցուց մեծամեծ նոցալներով հայհոյել, խանութներն երկար ատեն վախէն գոց մնալ, հարկբարձու մարդասպան սպասուորներ իւր ձեռաց տակ ունենալ և ցերեկ զանոնք ծածուկ պահելով, գիշեր ատեն զիւրաքաղաքին և զիւրեան վրայ յարձակել տալ, գողութիւն, բաւանութիւն, կամ թէ բազմամբոյն հարստահարութիւններ անել, անպատմելի է մեր կրած չարչարանք, որ կը կրենք յիշեալ Սեփիւն-պէյի և իւր սպասուորաց ձեռքէն. յիշեցը խորայնացող ժամանակ և իւրեանց կանանց տառապանք. արքայր կենդանի է Տէր, տանապատիկ աւելի անոնցմէ ցաւ և նեղութիւնը մեր վրայ տիրած են և կը տիրեն. որչափ երկար և բարձու գրեմք, տակաւին պահպանութիւն ունի և չը լրանար: Այս օրերս Մարտիան Սարգիս անունով մէկուն տունը մտնելով արամբ և կանամբ, ութսուն լիտր բրինձ և բազում կարասիք տարին. յիշեալ Սարգիսը կատակարութեան բողոքելու ժամանակ իր երկու ջորիները յիշեալ աւագակներ առնելով վախան, բայց ոտիկանք գալով մէկ երկուքը բռնեցին, որոնք արեւնարբու Սեփիւն-պէյը ոտիկանայ ձեռքէն առաւ և անոնք ալ թողուցին գնացին: Մ. Ղազարեան Յովհաննէս անունով մէկը շուկային մէջ գանակոծուելով, մէկ քանի օրէն վերջ մեռաւ»:

ՅԻՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԴՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Երէկ հեռագիրը այնպիսի լուր բերեց Ֆրանսիայից, որի վրա հիմնվելով կարելի է որոշ կարծիք յայտնել ֆրանսիական պարլամենտի անդամների ընտրութիւնների հետեւեալ մասին:

Այդ մասին մի որոշ կարծիք յայտնելու համար ձեռքի տակ դրական փաստեր ունենալով մի ուրախալի երևոյթ է, որովհետև մի ամսից աւել է արդէն, որ ամբողջ Ֆրանսիան ընտրողական անդամ մէջ էր, իսկ ամբողջ Եւրոպայում շատ մեծ էր այն մարդկանց թիւը, որոնք կարծէք համարապետութիւնը կարող է հարուստ ստանալ և այն էլ կորստաբեր հարուստ:

Սակայն իստիկով նախահայրերի լեղուտի, փառք Աստուծոյ, այժմ հանրապետութեան բարեկամները ազատ շունչ կարող են քաշել, որովհետև յաղթութիւնը կրկին մնաց հանրապետականների կողմը: Պարզից եկած հեռագիրները այդ սպասուորացանում են. ներքին գործերի միջնորդի հարողորդած տեղեկութիւններից երևում է, որ պատգամաւորների նոր ժողովում հանրապետականները կունենան 369 ձայն, իսկ հանրապետութեան հակառակողները 201 ձայն: Միւսն այժմ ընտրվածները մէջ բուզանեանները միայն 21 ձայն ունեն:

Անկասկած, շատ ցանկալի կը լինէր միանգա-

մայն ճնշված և ոչնչացած տեսնել այն տարրերը, որոնք հանրապետութեան թշնամիներ են, որոնք կամենում են առաջ մղել միապետականների գործերը, — բայց առ այժմ, տարաբաղաբար, հանրապետական Ֆրանսիան դեռ այդ բաղադրին չէ արժանանում. սակայն նոյն Ֆրանսիան, անկասկած, մեծ յոյս ունի, որ մտիկ սպառնալով կոչնչանան այն բոլոր տարրերը, որոնք ձգտում ունեն հանրապետական Ֆրանսիայի աւերակների վրա հիմնել իրանց գոյութիւնը: Եւ այդ յոյսը ունենալու համար Ֆրանսիան բաւական հիմունքներ ունի Պատմական կենդանի մէջ մի չը տեսնված և աներկայալի փոփոխութիւն պէտք է պատահի, որպէս զի Ֆրանսիայում կարելի լինի ոչնչացնել իրերի այժմեան դիրքը՝ աւելի յետադիմական քայլեր անելու համար, որովհետև աներկայալի է, որ այն երկիրը, որը այժմեան դրութեան հասնելու համար երկար տարիներ արիւն թափեց, ահագին զոհարեցութիւններ ունեցաւ, աներկայալի է, ստույգ ենք, որ այդ նոյն երկիրը հեշտութեամբ մտանաւ իր մտիկ անցեալը, իր կրած նեղութիւնները և քաղաքակրթութեան գործում իր ունեցած դերը, և մտանալով այդ բոլորը՝ ենթարկվել այն յետադիմական հոսանքին, որի նպատակն է Ֆրանսիայում հանրապետութիւնը ոչնչացնել և երկիրը տալ այս կամ այն բռնապետի և արկածախնդրի ձեռքը... Այդպիսի բան Ֆրանսիան չէ կարող անել, — ահա այն հաստատ, որ ունի առաջադիմական ամբողջ Եւրոպան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆ

— Թիւրքաց սուլթանի կարգադրութեամբ կադմակերպվելու է մի նոր զորագունդ, որը պէտք է յատկապէս տեղաւորվի Կրիտէ կղզու վրայ:

— Ալիւնայից գրում են, որ կառավարութիւնը բանակցութիւններ է սկսել չէխերի հետ հաշտութիւն կայացնելու մտքով:

— Թէհրանից հեռագրում են, որ Պարսկաստանի արեւմտեան սահմանի վրա մի տեղում խուսար երեսաց: Այդ հիւանդութիւնը տեղափոխվել է այդտեղ Բաղադից:

— Բելգրադում լուրեր են պտտում, որ Միւսն թագաւորը մտադրութիւն ունի այնտեղ գալ հէնց այն միջոցին, երբ Նատալիա թագուհին այնտեղ կկազմուի լուր կայ նոյնպէս, որ Միւսն թագաւորը մտադրութիւն ունի իր հետ տանել իր որդի Ալէքսանդրին՝ մի առժամանակ արտասահմանում ճանապարհորդելու համար:

— Պարիզից գրում են, որ բացի եղած երկաթուղիները, կառավարութիւնը վճար է անցնելուն մի քանի նոր գծեր՝ արեւելեան սահմանի վրայ:

— Մի քանի և բոսպական լրագիրներ այն միտքն են յայտնում, որ անտրիական կառավարութիւնը դժուար թէ կարողանայ սերտ հաշտութիւն կապել չէխերի հետ, որովհետև կառավարութիւնը հաշտութեան հարցը ձեռնարկ յարաբերութիւնների հարց չի նկատ իրոյս է տալիս չէխերին տալու այն իրաւունքները, որոնց համար նրանք կուտան են:

— Բոլգարական յայտնի գործիչ Զաքար Ստոյանով այս օրերս վախճանվեց Պարիզում: Ստոյանովի գնացել էր Պարիզ ցուցահանդէսը տեսնելու համար: Նա 39 տարեկան էր և շատ առողջ. նա վախճանվեց յանկարծակի, այնպէս որ նրա մահը զանազան ենթադրութիւնների առիթ է տալիս:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱՌՔԻՒՆՆԵՐ

ՊԱՐԻՉ, 12 սեպտեմբերի: Ներքին գործերի միջնորդի հաղորդագրութեան նայելով, յայտնի են հետեւեալ 560 ընտրութեան հետեւեալները. 576-ից ընտրված են՝ 244 հանրապետականներ, որոնց մէջ են 167 յախարար և 57 արժաստականներ. հանրապետութեան հակառակողները ընտրված են 159, որոնց մէջ 86 բոյախարար, 51 բունապետիստ և 21 բուլանիստ: Կրկնաքանակութիւնը 177 է. նրանցից 135 նպատակաւոր են հանրապետութեան համար: Միջնորդական հաղորդագրութեան վերջում ասված է, որ սպագայ ժողովում կը լինեն 369 հանրապետականներ և 201 հանրապետութեան հակառակողներ: Բացի զաղթական երկրների 10 ընտրութիւնների հետե-

անքից, մնում է իմանալ 6 ընտրությունների հետևանքը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 սեպտեմբերի Պետերբուրգի նահանգապետ Լուսիովսկի, իր խնդրին համաձայն, տեղափոխելու պատճառով արձակված է ծառայությունից, ստանալով իսկական զազանի խորհրդակցի ատիժան: Գրա փոխարեն նշանակված է արդարադատության մինիստրության խորհրդի անդամ կոմս Տոյ: «Гражданинъ» լրագրի հարցում է, որ առաջին անգամ բաժնապետների պաշտոնները սկսեցին հաստատվել միայն վեց նահանգներում, փոխանակ ութ նահանգներին մեջ մտցնելու, ինչպես ենթադրվում էր առաջ: Գորս զգված երկու նահանգներն են Խարկովի և Նովոռոզի նահանգները. իսկ մի քանի ամսից յետո, երբ հարկաւոր կը լինի այդ պաշտոնները հաստատել միև նահանգներում, այն ժամանակ դրանց մեջ կը մտցնեն և յիշեալ երկու նահանգները, այնպէս որ այն ժամանակ այդ պաշտոնները հաստատելու վերաբերեալ հերթական նահանգների թիւը կը լինի ոչ թէ 8 այլ 10:

ՊԱՐԻՉ, 12 սեպտեմբերի Այսօր փակվեց երկաթուղային կոնգրեսը: Յաջող երկաթուղային կոնգրեսի տեղը որոշված է, որ Պետերբուրգը կը լինի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ Սեպտեմբերի 12-ին

Table with 2 columns: Item description and Price. Includes items like 1000 թուրքի, 100 թուրքի.

Table with 2 columns: Item description and Price. Includes items like Պետական 5% տոմս 1-ին շրջանի, Պետական 5% տոմս 2-րդ, Պետական 5% տոմս 3-րդ, Պետական 5% տոմս 4-րդ, Պետական 5% տոմս 5-րդ, Պետական 5% տոմս 6-րդ.

ԽՄԱԳՐՈՒԹԱՆ ԿՈՂՄԻՑ

ԿՈՒՍԱՊԱՏ. Գ. Յ. ԵԹԷ «Մշակը» ղաղարկ էինք ձեզ ուղարկել, պատճառն այն էր, որ դուք գրվել էիք միայն կես տարով: Այժմ կը շարունակենք ուղարկել: ՇՈՒՇԻ ԼԷՕ. Ձեր վեպը ստացանք: Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

որ աւարտել է Բագուի բնական դպրոցում, ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՄԱՍՆԱՌՐ ԳԱՍԵՐ ՏԱԼ: Կարող է պատրաստել աշակերտներ միջնակարգ դպրոցների համար. համաձայն է և կրկն ութ իւնն եր անել աշակերտներին հետ Ցանկացողները հասցեն կարող են իմանալ «Մշակի» խմբագրատանը: 5-5

ԵՐՐՈՐԿ ԿԱՐԳԻ ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ ցանկանում է տեղ ունենալ ծխական դպրոցներում: Կաւանդէ Հայոց լեզուով աւանդելու առարկաները: Ցանկացողները թող զիմեն իրանց վերջնական պայմաններով ԵՐԵՒԱՆ Թովմաս Նայանյանցին: 2-3

ԲԺԻՇԿ ՊՐԷՕԲՐԱԺԷՆԱԿԻ

Մասնաորակա բժշկում է էլեկտրականութեամբ, ֆարադեական և գալվանական հոսանքով ձեռքերի և ոտների անդամալուծութիւնից, բեթմատիզմից, ներլային հիւանդութիւններից և կոնտրակտուրայից (մկանաւորների անդամալուծութիւն), բժշկում է կոլերին և խուլերին անդամալուծութիւնից և նոյնպէս ընդունում է կանացի հիւանդութիւններով և սիֆիլիսով տկարներին: Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտան 9 ժամից մինչև 12 ժամ և երեկոյան 7 ժամից մինչև 8 ժամ: Տուն Պրոպոլի Միքայելեան փողոցի անկիւն թիւ 9 և Ալեքսանդրովսկայա թիւ 2, ինտանդանտութեան մօտ, վարձարձակ կաճաւորած սենեակների դիմաց: Домъ Попова, уголъ Михайловской ул. № 9 и Елисаветинской № 2, около Интендантства, противъ Воронцовск. номервъ. 3-14

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, որ վարժապետութեան իրաւունք ունի, ցանկանում է ուսուցանել լեզուի և այլ առարկաների դասեր ունենալ Հայոց դպրոցներում: Ցանկացողները կարող են զիմել—Ախալցխա, Յովհաննէս Մալխասեանց: 3-3

ԳԻՄՆԱԶԻՍՅԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՏԱՆ ՄԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՇԻ

ցանկանում է աշակերտուհիներ պատրաստել: Հասցեն. Նորաշէնի փողոց, տուն Պարունկեզովի, № 8. 5-10

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՌՈՒՍԱՑ ԼԵՁՈՒԻ ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

Գիւղական երկրասեան դպրոցի համար: Ցանկացողները կարող են պայմանները համար զիմել «Մշակի» խմբագրատանը: 2-4

Գ. Ե. Ը. ԵՐԵՔ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ Կամենում են միասին, բոլոր առարկաներից և առանձին-առանձին զանազան առարկաներից, տեղ ունենալ Հայոց դպրոցներում: Հասցեն՝ ԵՐԻՎԱՆ, Սապանյու. 2-3

ԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՐԳԻԿ

Առակ չափահասների համար ԳԵՐԳ ԲԱՐԵՊԱՇՏԱՆԻ: Վաճառվում է կենտրոնական գրավաճառանոցում: Գինն է 60 ԿՊ. 7-10

Ուսուցիչ Յ. Իւսուֆեան ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԻՐ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԳԻՇԵՐՈՒԿՆԵՐ: Այսօր տեղ պատրաստվում են աշակերտներ արքունի և Հայոց ուսումնարանների համար և կրկնութիւններ են անում: Գիմել հետեւեալ հասցեով կուլիա, Սիմեոնովսկի փողոց, № 16: Մի և նոյն տեղը արվում են վարձով և սենեակներ բոլոր յարմարութիւններով: 1-5

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, որ աւարտել է իր ուսման ընթացքը ուսուցչական դպրանոցում (մտքած է ուսուցչական ցուցակի մէջ Ե. կարգի) և երբ աւարի դասատու է եղել ուսուցանելու ու դրա պատկանեալ առարկաների, և վարել է աւագ-ուսուցչի պաշտօն, ցանկանում է ունենալ կամ աւագ-ուսուցչի, կամ ուսուցանելու վարժապետի տեղ: Պայմանների մասին զիմել «Центральная фотография Айвазова, на Мих. мосту, Теръ-Захарьяну. 1-3

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԻ ՎԱՐՃՈՒՇԻ

որը պէտք է աւանդէ Հայոց լեզուից, թուրքաբանութիւնից և ձեռագործից շարժական 22 դաս ստորին դասատուներում: Ցանկացողները պայմանները իմանալու համար շուտով կարող են զիմել «Մշակի» խմբագրատանը: 2-3

Յ Ե Յ Ե Ր

Լոյս տեսաւ Յ Ե Յ Ե Ր վեպ աշխատութիւն Պերճ Պառնեանի: Երկու գրքով է թիֆլիսի գրավաճառանոցներում: Գինն է 1 ռուբլի: 5-5

Վ. ՇԷՔՍՊԻՐ «ՋՈՒՐ ՏԵՂԸ ՄԵԾ ԱՂՄՈՒԿ»

Կովեդիա 5 արարուածով Թարգ. Յ. Լալայեանցի Գինն է 50 Կոպէկ: Վաճառվում է կենտրոնական գրավաճառանոցում և իշլ. Բէհրուլեանի գործաւարկական պալլիսիոնում: 6-10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԿԱՍԱՐԻՆԵՆԻ (կուլիա, վարձուցովի արձանի հանդէպ) Հիւանդներին ընդունում են ամեն օր ԱՌԱՌՈՏԵՐԸ ԲՈՒԿՎՈԿՍԿԻ-10-11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց. ԿԻՆԲԻՇԿ ԽԱՀԱԿԵԱՆՑ-11 1/2-12 ժ. կանանց և երեխայոց ց. ԲԵՆԿԵՎՍԿԻ-11-12 ժ. ականցի, կոկորդի, ջրի ց. և սիֆիլիսի (միքայելեան և առամացաւի) ԱՐՏԵՄԻՆՎ-12-1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ-12-1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի: ԵՐԵՎԱՆԵՐԸ ԳԱԿՈՍՄՍԿԻ-5 1/2-7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի. ՓՈՒԿԻՆԵԱՆ-5 1/2-6 1/2 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրութեամբ): ԲԵՆԿԵՎՍԿԻ-7-8 ժամ. Հիւանդանոցում են մանկաբարձուհիք՝ Երեւանցի Ե. և Արտազեան: Վճար-50 Կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ: Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ԲՈՒԿՎՈԿՍԿԻ

ՊՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԻԵԼԻՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՍԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓՉԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՈՒՈՒԵԱՆ ԱՍԱՄՆԱԳԵՐ ԿԱԹԻՆԵՐ 50 ԿՊ. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈԿԱՅԻՆԵԱՆ ԱՍԱՄՆԱՅԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՊ. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՍԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՊ.

Յ ՄԱՍՆԱՌՐ ՊԱՀԵՍ. ԹԻՖԼԻՍԻՄ՝ կողմասեան ղեղափառուտան, և պ. պ. Շահ-պարտեանցի, Մակիկերի, Սէնչի-կովսկու և Ազուբովի ղեղափառուներում: ԲԱԳՈՒԻ մէջ, Բէկկերի մօտ, ԲՈՒԹԱՅԻՍՈՒՄ՝ կողջեղի մօտ, ԱՍԱՎՐՈՊՈԼՈՒՄ՝ Բրոսնոցիւ. մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՍՊՈԼԻՍ՝ 30-52 (Հ.)

ԿՈՇԿԱԿԱՐԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ ԱՂԱՍԻ ՏԷՐ-ՉԱՔԱՐԵԱՆՑԻ Գօլովինսկի, տուն Բէյտերի, № 11 Ընդունում է ամեն տեսակ պատուէրներ չափաւոր գներով: Արհեստանոցում ձախվում են նոյնպէս տղամարդկանց և ջրնորագան ամեն տեսակ պատրաստի կոշիկներ: 5-10 (Հ.)

